

Վիպեկա  
Չուդամանի

Bookmark

आदा शङ्कराचार्य  
वविकचूडामणा

Bookmarks

Շրի Շանկարաչարյա

Վիվեկա  
Չուդամանի

Ադամանդը զանազանման թագի

Մեկնությունը՝  
Ռուբեն Ֆիլանի



ԵՐԵՎԱՆ  
2022

ՀՏԴ 233  
ԳՄԴ 86.33  
Շ 300

Շանկարաչարյա Շրի  
Վիվեկա Չուդամանի: Ադամանդը զանազանման թագի /  
Շրի Շանկարաչարյա;  
Մեկնությունը՝ Ռ. Ֆիլյանի.- Եր.: Newmag, 2022.- 132 էջ:

Վիվեկա Չուդամանին ներածական տրակտատ է՝ հինդուիզմի Ադվայտա-Վեդանտա ավանդույթի հիման վրա: Այն դարեր շարունակ համարվել է Ադվայտայի ուսուցման ձեռնարկ: Վիվեկա Չուդամանի բառացի նշանակում է «իմացության գանձարան»: Ադվայտա-Վեդանտայի փիլիսոփայությունն ինքնաուսուցման ձեռնարկ է՝ աշակերտի և հոգևոր ուսուցչի երկխոսություններով: 1908 թվականին Շրի Ռամանա Մահարիշին այն սանսկրիտից թարգմանաբար մեկնեց տամիլերեն լեզվով որպես արձակ ստեղծագործություն:

ՀՏԴ 233  
ԳՄԴ 86.33



Շնորհակալություն Ջեննի Ֆիլյանին՝ բնագրագիտական աշխատանքներին իր ջերմ մասնակցության համար:

ISBN 978-9939-884-71-4

Շրի Շանկարաչարյա «Վիվեկա Չուդամանի» © 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ  
© Ֆիլյան հիմնադրամ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին և Ֆիլյան հիմնադրամին:

BOOKMARK





# Ամենայն Բանը գոյության

Ազատագրման իր ճանապարհին սա Ռուբեն Ֆիլյանի վերջին արարն էր: 1970-ականների ավարտին նա թարգմանաբար մշակեց հնդիկ փիլիսոփա, Ադվայտա-Վեդանտայի հիմնադիր Շրի Շանկարաչարյայի «Վիվեկա Չուդամանի» կոթողային տրակտատը: Մեզ ստույգ հայտնի չէ, թե Ֆիլյանի ձեռքի տակ թարգմանական ինչ հրատարակություններ են եղել, որոնց հիման վրա նա կատարել է իր մշակումը:

Կան համընկնումներ Շրի Ռամանա Մահարիշիի (թամիլերենից անգլերեն) տարբեր տարիների լույս տեսած «Վիվեկա Չուդամանի» տարբերակի հետ: Եվ մշակումն ավելի քիչ է համընկնում 1912-ին հրատարակված տրակտատի ռուսերեն տարբերակի հետ: Գուցե կամ ըստ ամենայնի Ռուբեն Ֆիլյանն օգտվել է ինքնահրատ թարգմանությունից: Անկասկած, սա Վիվեկայի ֆիլյանական մեկնությունն է, որի մեքենագիր նմուշը պահ էր տվել ծնողներին Խորհրդային Հայաստանից հեռանալու նախօրեին:

Վիվեկայից - այս մտքի, մարմնի ու ոգու ճանաչումից, այս՝  
մտքի, մարմնի ու ոգու աննահանջ հրաժարումից սկիզբ են  
առնում և ուրեմն վերադառնում են Ռուբեն Ֆիլյանի գրական,  
այսինքն՝ հոգևոր որոնումները: Դեռ առաջին քայլերից աշ-  
խարհիկ գրականը նրա համար հոգևորն էր, ինքը՝ խոսքը,  
ամենայն Բանը գոյության: Հնդկաստանը - նրա խորագույն,  
անպարագրելի մշակույթը Ռուբեն Ֆիլյանի հոգետունը դար-  
ձավ, և այնտեղ նա թողեց իր երկրային կյանքը:

Հ. Գ. մեր խմբագրական միջամտություններն արձագանքներն  
են լեզվական, խոհային ու ներժամանակյա պատահարների,  
որոնք կասկածվում ու համոզվում են, փորձառվում ու փոփոխ-  
վում են, հերքվում ու վերահաստատվում են - հարաշարժ:

Շանտի Շանտի Շանտի

4 օգոստոսի, 2022

արամ պաշյան



## Թարգմանչի կողմից

Մեծն Հոգևոր Ուսուցիչ Շրի Շանկարը (հայտնի է նաև Շանկարաչարյա անունով, որ նշանակում է «Ուսուցիչ Շանկարա») ապրել և ստեղծագործել է մ. թ. ա. 510-478 թթ: Ոմանք համարում են, որ նա ապրել է մեր թվարկության 8-րդ դարում: Շանկարը ժառանգել է ընդամենը 11 գործ: Վիվեկա Չուդամանին սանսկրիտից թամիլերեն թարգմանել է Ռամանա Մահարիշին, երբ ապրում էր Արունաչալա լեռան Վիրուպակշա քարանձավում (մեր դարասկզբին): Մահարիշին, լինելով կատարյալ Ջնանի, Շրի Շանկարի ուսմունքն ընդունել է որպես իր սեփականը: Սա ազատ թարգմանություն է, որում բնագրի համեմատ շարադրանքի հերթականությունը փոփոխված է:



Բնագրական

Շրի Ռամանա Մահարիշի



Bookmark

Աշխարհում ամեն մի էակ ձգտում է խուսափել վշտից ու ցավից, մշտապես լինել երջանիկ և զգում է, որ իր բուն էությունը տառապանքն ու հիվանդությունը չեն: Ամեն ոք մեծագույն սեր է տաժում ինքն իր հանդեպ, բայց նման սերն անհնար է, երբ երջանկություն չկա: Խորը քնի մեջ, չնայած գիտակցության բացակայությանը, մարդն առնչվում է երջանիկ գոյավիճակին: Այդուհանդերձ, չիմանալով իր սեփական բնությունը, որ հենց ինքը երջանկությունն է, նա խորասուզվում է աշխարհիկ գոյության օվկիանոսը՝ շեղվելով դեպի երջանկություն տանող ճշմարիտ ուղուց, և գործում է՝ ղեկավարվելով թյուր պատկերացմամբ, թե երջանիկ լինում են այս և այլ աշխարհներում հաճույքներ ստանալով:

Ցավոք, չկա այնպիսի հաճույք, որ տառապանքի հետ կապված չլինի: Սա դրդեց Շիվա Աստծուն, Շրի Շանկարաչարյայի կերպարանքն ընդունած, ի հայտ գալ և բացատրել իսկական երջանկության ճանապարհը, ապա ցուցադրել այն Վեդանտայի եռյակ կանոնի (Պրաստհանա Տրայա) իր մեկնումներով և սեփական կյանքի օրինակով: Այս մեկնաբանությունները, սակայն, ջերմեռանդորեն Ազատագրում փնտրողների մեջ լայն ճանաչում չեն ունեցել, քանզի նրանց մեծ մասը բավարար նախապատրաստված չէր: Շրի Շանկարն այս մեկնաբանություններն անվանել է «Ադամանդը զանազանման թագի»: